ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հոկտեմբերի 2020 թվականի №- Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի օգոստոսի 26-ի №581-20 և ի լրումն՝ սեպտեմբերի 16-ի №634-20, սեպտեմբերի 25-ի №655-20 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ Ընկերությունը, վարկային միջոցներ ներգրավելու նպատակով, նախատեսում է գրավադնել Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող՝ «Լիորմանդ Հոլդինգզ Լիմիթեդ» ընկերությանը պատկանող 73927 (Ընկերության կանոնադրական կապիտալի՝ 30,0000406 տոկոսը կազմող) և «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 172496 (Ընկերության կանոնադրական կապիտալի՝ 69,9999594 տոկոսը կազմող), միասին՝ 246423 հատ սովորական բաժնետոմսերը, ինչպես նաև Ընկերության կողմից ապագայում թողարկվելիք բաժնետոմսերը (եթե այդպիսիք լինեն)՝ հօգուտ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու Ասիական զարգացման բանկի, ինչպես նաև Միջազգային ֆինանսական կորպորացիայի (այսուհետ՝ Գործարքներ): Ըստ գրությունների՝ Գործարքները նախատեսվում է կնքել մի դեպքում՝ Ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու Ասիական զարգացման բանկի միջև 2020 թվականի հունիսի 1-ին կնքված, և մյուս դեպքում՝ Ընկերության և Միջազգային ֆինանսական կորպորացիայի միջև կնքվելիք վարկային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման ապահովման նպատակով: Ընկերության բաժնետոմսերը գրավադրվում են որպես հաջորդող գրավ:

Նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովի համաձայնությունը՝ կնքելու Գործարքները,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի սեպտեմբերի 7-ի №ԳԲ/34.1-Մ2-2/3805-2020 և ի լրումն սեպտեմբերի 29-ի №ԳԲ/34.1-Մ2-2/4138-2020 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) դիրքորոշումը ստանալու համար,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 6-ի №02/12.8/46090-2020 գրության համաձայն՝ Ընկերության գրություններով ներկայացված հայտի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը Հանձնաժողով կներկայացվի Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության ավարտից հետո,

դ) Հանձնաժողովը, վերը նշվածի հիման վրա, սույն թվականի հոկտեմբերի 8-ի №ԳԲ/34.1-Մ2-2/4262-2020 գրությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին ներկայացված գրությամբ հայտնել է մինչև Կառավարության դիրքորոշումն ստանալը Գործարքների գրավադրման առնչությամբ Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետով սահմանված ժամկետը կասեցված համարվելու մասին, ինչի մասին սույն թվականի հոկտեմբերի 8-ի №ՍՇ/34.1-Մ2-2/4260-2020 գրությամբ տեղյակ է պահվել նաև Ընկերությունը,

ե) 2020 թվականի հոկտեմբերի 9-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի գրավադրման գործարքներին համաձայնություն տալու մասին» №1665Ա որոշումը, որով ամրագրվել են այդ համաձայնության ուժի մեջ մտնելու և վավերական դառնալու պայմաններ,

զ) ի պատասխան Հանձնաժողովի սույն թվականի հոկտեմբերի 19-ի №ԳԲ/34.1-Մ2-1/4369-2020 գրությամբ արված հարցմանը՝ 2020 թվականի հոկտեմբերի 22-ին Հանձնաժողով է ներկայացվել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի №02/12.8/47568-2020 գրությունը՝ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 9-ի №1665Ա որոշմամբ առաջնորդվելու մասին,

է) Հանձնաժողովի կողմից Գործարքներին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանն ու պետական շահերին, իսկ անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքների նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 9-ի №1665Ա որոշմամբ սահմանված պայմաններով համաձայնություն տալ՝

1) հօգուտ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու Ասիական զարգացման բանկի գրավադնելու՝ Ընկերության կանոնադրական կապիտալի հարյուր տոկոս՝ «Լիորմանդ Հոլդինգզ Լիմիթեդ» ընկերությանը պատկանող 73927 (Ընկերության կանոնադրական կապիտալի՝ 30,0000406 տոկոսը կազմող) և «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 172496 (Ընկերության կանոնադրական կապիտալի՝ 69,9999594 տոկոսը կազմող), միասին՝ 246423 հատ սովորական բաժնետոմսերը, ինչպես նաև Ընկերության կողմից ապագայում թողարկվելիք բաժնետոմսերը,

2) հօգուտ Միջազգային ֆինանսական կորպորացիայի գրավադնելու՝ Ընկերության կանոնադրական կապիտալի հարյուր տոկոս՝ «Լիորմանդ Հոլդինգզ Լիմիթեդ» ընկերությանը պատկանող 73927 (Ընկերության կանոնադրական կապիտալի՝ 30,0000406 տոկոսը կազմող) և «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 172496 (Ընկերության կանոնադրական կապիտալի՝ 69,9999594 տոկոսը կազմող), միասին՝ 246423 հատ սովորական բաժնետոմսերը, ինչպես նաև Ընկերության կողմից ապագայում թողարկվելիք բաժնետոմսերը:

2. Սահմանել, որ

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքների կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը,

2) սույն որոշումը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե դադարեցվում է Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 9-ի №1665Ա որոշման, որոշմամբ տրված համաձայնության գործողությունը կամ խախտվում է նշված որոշմամբ

Ընկերության բաժնետոմսերի գրավադրման համար սահմանված պահանջներից կամ պայմաններից որևէ մեկը։

3. Ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործարքները կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրանց վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հոկտեմբերի 2020թ.